



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2017թ. թիվ 446-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի ԹԻՎ 165-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1233-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2010 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 165-Ա որոշման 1-ին կետի ե) ենթակետում, որոշմամբ հաստատված 10-րդ հավելվածի վերնագրում և «Լ. Ընդհանուր դրույթներ» մասի 1-ին կետում «Զարգացման ծրագրերի» բառերից հետո ավելացնել «, զբոսաշրջության» բառը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

2017թ. հոկտեմբերի 30
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ